

Պարույր Սևակ

Բեռան ներքո

Անցնում էիր:
Ողջ երեկոն քոնն էր կարծես,
Ողջ երեկոն՝ իր բույրերով ու ջերմությամբ:
Երկարափեշ եթե լիներ հագուստը քո՝
Ես կասեի,
Որ երեկոն քարշ էր գալիս քո ետևից՝
Քո հագուստի փեշի նման:
Սակայն կարճ էր հագուստը քո:
Եվ երեկոն
Ամփոփվում էր քո ծնկների ծալերի մեջ՝
Կարճ հագուստիդ կարճ փեշերի կարի ներքո...
Վերջալույսի արևը շեղ գտել էր քեզ
Ու շուլալվել քո հագուստի կոճակներին:
Վերջալույսի շեղ շողերի միջնորդությամբ
Երկարում էր քո ստվերը՝ հմայքի՛դ պես,
Ու քայլում էր քեզնի՛ց առաջ՝ հմայքի՛դ պես...
Եվ արթնացավ մեջըս հանկարծ
Ինքնաճաղկման և ամոթի
Տարօրինակ մի ցանկություն.
Եթե կյանքում կա քեզ նման մի թանկություն,
Ես ինչպե՞ս եմ կյանքին նայել էժան աչքով՝

Ոչ թե անո՛ւշ մի հիացքով,
Այլ մի տոհ՛պ,
Հաճախ դա՛ողն,
Նաև կծո՛ւ մի հայացքով:
Եվ ինչպե՞ս եմ հաճախ իջել-ստորացել՝
Բարկանալու և դատելու աստիճանի,
Չարանալու և ատելու աստիճանի,
Ու թույլ տվել, որ նողկանքը տեղից հանի
Հիացմունքի՛ն:
Հոգով-սրտո՛վ ներողություն...
Այսուհետև, ինձ հավատա՛,
Է՛լ չպիտի ես խառնըվեմ ո՛չ իմ գործին.
Է՛լ չպիտի այսուհետև
Հակվեմ կյանքի աղտ-աղարտի ծանրության տակ:
Առանց այն էլ ես հակված եմ բեռան ներքո
Ա՛յն վիթխարի երգեհոնի, որ ի ծնե
Սապատվել է իմ շալակին:
Թող հնչի նա՛:
Եվ անցիր դո՛ւ:
Միայն թե դու... «մե՛ քիչ կա՛մաց գնա, գո՛զալ»,
Որ քո կամաց և անշտապ քելքի չափին համաչափվի
Մեր խեղճ սրտի տրոփյունը հաճախակված,
Որ քո տեսքից հանգստանան աչքերը մեր,
Եվ քեզ թաքուն ունենալուց
Ջղերը մեր քիչ խաղաղվեն,
Ու երկարի այս անդորրը՝ շուքի՛դ նման,
Ու կարճանա հոգնությունը՝ փեշերի՛դ պես...

26.XI.1963թ.
Երևան

Յատուկ Պոէմ